ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարս համայնք, 19-րդ փող., թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 սեպտեմբերի 2016 թվականի N 46-Ա

ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանի N1 հավելվածի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N13-Ն հրամանի հավելվածի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1.2016 թվականի հոկտեմբերի 7-ին, ժամը 11:00-ին անցկացնել մրցույթ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ալափարսի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-գյուղատնտես (ծածկագիր 2.3-2) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

2.Մրցութային հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկման լիազորությունները դնել համայնքի ղեկավարի տեղակալ Վարդգես Հարությունյանի վրա:

3.Մրցութի նախապատրաստական աշխատանքների իրականացման պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գեղամ Հակոբյանի վրա:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2016 թ. սեպտեմբերի 5
գ.Ալափարս